ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2018/115

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր, տրված՝ 08.01.2019թ.)

Քննելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Ահնիձոր բնակավայրի նախակրթարանի արևային ցածր ճնշման ջրատաքացուցիչների տեղադրման նպատակով հայտարարված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Սոլար Էներջի Սիստեմ» ՍՊԸ-ի կողմից 26.12.2018թ. ներկայացված և 27.12.2018թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2018/115 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.12.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

««Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ՀԾ-ԳՀ-ԱԾՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 17.12.2018թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /17.12.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 18,000 ՀՀ դրամ:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով Կարգի 44-րդ կետի պահանջներով, 24.12.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցել է «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ Ընկերության կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը չհամապատասխանող և Ընկերությանը առաջարկվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում շտկել նշված անհամապատասխանությունները:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

Հայտնում ենք, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ առկա ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

Նախ, պետք է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի (հրապարակված է www.arlis.am համակարգում) համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար կազմակերպված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում բացահայտվել է, որ Ընկերությունը ունի հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն՝ <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարի գծով (նման պարտավորության առկայության փաստը մինչ այդ երբևիցե չի ներկայացվել ՊԵԿ-ի կողմից):

<<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> քաղվածքի համաձայն՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն 17.12.2018թ. դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունի: Եվ պետք է նշել, որ Ընկերության միասնական հաշվի պատկերում արտացոլված չէ դրոշմանիշների վճարի վերաբերյալ որևէ տեղեկատվություն, և «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացրել է՝ հիմք ընդունելով <<Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի>> տվյալները, ըստ որի՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /17.12.2018թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չուներ:

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, և համապատասխանաբար Ընկերության կողմից ներկայացված համապատասխան հայտարարությունը չի կարող գնահատվել իրականությանը չհամապատասխանող և Ընկերությանը չի կարող տրվել անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը իրականությանը չհամապատասխանող համարելու և

ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասով Ընկերությունից լրացուցիչ տեղեկատվություն ներկայացնելու մասին որոշումները:

2.Պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 2 հավելվածը՝ ՀՀ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ չունենալու մասով, գնահատել իրականությանը համապատասխանող:

Ընկերությունը 09.01.2019թ. ի լրումն ներկայացված բողոքի հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության ընթացքում «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից հայտնվեց, որ www.gnumner.am կայքում բացակայում է հրապարակված որևէ արձանագրություն, որի համաձայն Ընեկերության հայտը մերժվել է՝ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ ունենալու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի <<ա>> պարբերության համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ...:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը տեսականորեն կարող է ընդունել որոշում «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ ունենալու հիմքով (դրոշմանիշային վճարների գծով), ուստի, ի լրումն Ընկերության 26.12.2018թ. բողոքով ներկայացված պահանջների, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մ. Անանյանին խնդրում ենք «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին արգելել ընդունել որոշում «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ՝ վերջինիս կողմից ՀՀ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ ունենալու հիմքով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.01.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, Ընկերությունը ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ բողոքի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ի պատասխան գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 27.12.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/24338-18 գրության՝ Պատվիրատուն 08.01.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցմանը վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.01.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2018/115 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ԱՄ-2018/115 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Ահնիձոր բնակավայրի նախակրթարանի արևային ցածր ճնշման ջրատաքացուցիչների տեղադրման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***17.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 1 067 557 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 18 000 ՀՀ դրամի չափով:

4. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի 26.12.2018թ. բողոքը և 09.01.2019թ. ներկայացված ի լրումն բողոքի գրությունը՝ կից փաստաթղթերով, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 08.01.2019թ. ներկայացված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցմանը վերաբերող փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.12.2018թ. տրամադրված եզրակացությունը և 27.12.2018թ. թիվ 1689 տեղեկանքը, 17.12.2018թ. «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել

վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Ահնիձոր բնակավայրի նախակրթարանի արևային ցածր ճնշման ջրատաքացուցիչների տեղադրման նպատակով հայտարարվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***17.12.2018թ.*** հայտ է ներկայացրել «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն:

Ընկերությունը «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնին մասնակցելու նպատակով հայտի N 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 1 067 557 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 24.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 18 000 ՀՀ դրամի չափով:

ԳԲՔԱ-ԱՄ-2018/115 բողոքի քննության շրջանակներում Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 08.01.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, Ընկերության ներկայացուցիչը ապահովել է իր մասնակցությունը նիստին, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքով ներկայացրել է 17.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 17.12.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի ՀՎՍ վարչության 27.12.2018թ. թիվ 1689 տեղեկանքը առ այն, որ 17.12.2018թ. դրությամբ Ընկերության 18 000 ՀՀ դրամ պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Այսպիսով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 24.12.2018թ. տրամադրված եզրակացությամբ արձանագրվել է, որ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 18 000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վեջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Այսպիսով, ուսումնասիրելով Ընկերության 17.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը 17.12.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի, առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ, Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման փաստական հանգամանքներով կայացրել է ԳԲԽ-ԱՄ-2018/83 և ԳԲԽ-ԱՄ-2018/87 որոշումները, որոնց շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն գրությամբ հայտնել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Ընկերությունները պարտավորությունները կատարելիս առաջնորդվել են բացառապես էլեկտրոնային համակարգի անձնական գրասենյակում անձնական հաշվի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությամբ, որի համաձայն ընկերությունը ժամկետանց պարտավորություններ չի ունեցել, ինչպես նաև հաշվի առնելով դրոշմանիշային վճարների պարտավորությունները որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ համարելու վերաբերյալ հարկ վճարողի իրազեկված չլինելը, ուստի տվյալ պարագայում ժամկետանց հարկային պարտավորությունների հանգամանքը, գնումների գործընթացին մասնակցության առումով, չդիտարկել որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություն:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից 26.12.2018թ. ներկայացված բողոքը բավարարել՝ մասնավորապես

1. Պարտավորեցնել «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնելու «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի կողմից թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը իրականությանը չհամապատասխանող համարելու մասին որոշումը:

2. Արգելելու «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2018/71» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում՝ վերջինիս կողմից ՀՀ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ ունենալու մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ